

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Շվեդիա (Ստոկհոլմ) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը.

Աննա Հակոբյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչության հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բաժնի պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Շվեդիա (Ստոկհոլմ), 2025 թվականի սեպտեմբերի 15-20.

4. Հրավիրող կողմը.

Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ՝ Եվրոպական Միության աջակցությամբ.

5. Գործուղման նպատակը.

Մասնակցություն «Իրավունքներ, ծառայություններ, մասնակցություն. Հայաստանում հոգեկան առողջության համապարփակ շրջանակի խթանում» ծրագրի շրջանակում ուսումնական այցին:

6. Քննարկված թեմաները.

- Հոգեկան առողջության ոլորտում իրականացվող ծրագրերն ու ծառայությունները, դրանց ուղղորդման և իրականացման մեխանիզմները,
- Համայնքների դերն ու մասնակցությունը ծառայությունների մատուցման գործընթացում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Ուսումնական այցի շրջանակում այցելեցինք անձնական պաշտպանի գրասենյակ, որտեղ գրասենյակի ներկայացուցիչները ներկայացրեցին այս ծառայության սկզբունքները, գործառույթները, առանձնահատկությունները:

Ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է կառավարության և համայնքային բյուջեներով: Գրասենյակը համարվում է քաղաքապետարանի ստորաբաժանում:

Շահառուները հոգեկան առողջության կամ մտավոր խնդիրներ ունեցող 18 տարեկանից բարձր տարիքի անձինք են: Անձնական պաշտպանները աջակցում են նրանց տարբեր իրավիճակներում՝ պետական կամ այլ մարմինների հետ, այլ անձանց հետ հարաբերություններում, որոշումներ կայացնելու հարցերում, բայց ոչ թե նրանց փոխարեն, այլ նրանց հետ աշխատելով և մոտիվացնելով՝ ինֆորմացիան ընկալել և հասկանալ, դիմում ներկայացնել, մասնակցել ժողովներին, նշումներ կատարել, միասին մտածել, խնդիրներ լուծել, շփումներ ձևավորել և այլն: Շահառուների փաստաթղթավորում չի իրականացվում, նրանք ազատ են հաճախում, ամբողջ աշխատանքը տարվում է բանավոր հիմունքներով՝ գաղտնիությունը պահպանելու և շահառուի մոտ վստահություն առաջացնելու նպատակով: Սակայն անանուն հաշվառում են տանում՝ քաղաքապետարան հաշվետվություն ներկայացնելու համար: Մոնիթորինգի մեխանիզմ ևս չունեն, ամբողջը վստահության վրա է: Շահառուի հետ աշխատելու հստակ սահմանված ժամանակացույց ևս չունեն, ծառայությունը մատուցում են ըստ կարիքի:

Ստոկհոլմում կա 15 անձնական պաշտպան, Շվեդիայում՝ 320: Յուրաքանչյուր անձնական պաշտպան ծառայություն է մատուցում 20 շահառուի: Նրանք պետք է ունենան բարձրագույն կրթություն և անցնեն պարտադիր վերապատրաստման 7 օրյա կուրս:

Հանդիպումներ ենք ունեցել համայնքային մարմնի ներկայացուցիչների հետ (համարժեք մեր համայնքապետարանին): Համայնքային մարմինը գործում էր

քաղաքապետարանի ենթակայությամբ, ուներ համապատասխան բաժին, որն զբաղվում էր հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցների հիմնահարցերով: Այս բաժինն էր կազմակերպում շահառուների դիմումների ընդունումը և ուղղորդում համապատասխան ծառայություններ ստանալու: Ներկայացվեց Շվեդիայում ներդրված «Սոցիալական հոգեբուժության» գաղափարը:

Սոցիալական հոգեբուժությունը ներառում է այնպիսի ծառայություններ, որոնք նպաստում են հոգեկան առողջության կամ մտավոր խնդիրներ ունեցող անձանց ոչ միայն բժշկական, այլև սոցիալական աջակցության միջոցով նրանց սոցիալական ներառմանը, անկախ կյանքի, առօրյա կյանքը կառավարելու հմտությունների, հասարակության մեջ մասնակցության ապահովմանը: Ճկուն շղթայով շահառուները միշտ գտնվում էի ծառայությունների օղակում:

Սոցիալական հոգեբուժության շրջանակում աջակցությունն ունի մի քանի բաղադրիչ՝

- Ֆինանսների, բնակարանի կամ անձնական հիգիենայի կառավարում
- Սոցիալական հարաբերությունների պահպանում, բուժում
- Իշխանությունների հետ հաղորդակցում
- Աշխատանքին կամ կրթությանը մասնակցություն:

Կարիքի գնահատման արդյունքում շահառուներն ուղղորդվում կամ ուղեգրվում են տարբեր ծառայություններ՝ աջակցվող բնակարաններ, համայնքային տներ, ցերեկային կենտրոններ, անձնական պաշտպանի ծառայություն և այլն: Նպատակն է ամրապնդել անձի ինքնուրույնությունը, անվտանգությունն ու կյանքի որակը:

Այցելել ենք նաև թվարկված ծառայությունները մատուցող կազմակերպություններ (կենտրոններ): Մասնավորապես, համայնքային տներ, որտեղ շահառուները հոգեկան առողջությամբ կամ մտավոր խնդիրներով անձինք էին: Այս տները տարբերվում են հայաստանյան մոդելից: Մեկ ընդհանուր շենք էր, որտեղ յուրաքանչյուր շահառու ուներ իր առանձին բնակարանը՝ սանհանգույցով, խոհանոցային մասով: Շահառուները վճարում էին տան վարձակալությունը, իսկ մնացած ծառայությունները (համապատասխան մասնագիտական թիմի կողմից

անկախ կյանքի հմտությունների ձևավորումը) փոխհատուցվում է համայնքային և կառավարության բյուջեներից: Բնակարանի կահավորումը ևս շահառուն է ապահովում: Համայնքային բյուջեից շահառուին տրվում էր նաև որոշակի գումար (350 եվրո)՝ սննդի համար: Շենքում կար խոհանոց, որտեղ սնունդը պատրաստվում էր և կարող էին գնել, բայց կարող էին նաև իրենց բնակարանում պատարստել: Շենքում մշտապես գտնվում էին սոցիալական աշխատողները՝ հերթափոխով, համակարգողը: Բազմամասնագիտական թիմը համապատասխան գործիքակազմով գնահատում է շահառուի կարիքները, կազմում անհատական պլան, որը վերանայվում է պարբերաբար: Շահառուների մուտքն ու ելքը ազատ էր, նրանք կարող էին հյուրընկալել կամ բացակայել շենքից:

Այցելեցինք նաև համայնքային կենտրոն, որտեղ զբաղվածության ծառայություններ էին ստանում ֆիզիկական և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք: Ըստ գնահատված կարիքի՝ տարբեր արհեստների միջոցով սովորեցնում էին որոշակի հմտություններ՝ կար ու ձև, փայտագործություն, նկարչություն և այլն (նման էր սոցիալական ձեռնարկության):

Մյուս կենտրոնը, որտեղ այցելեցինք, ծառայություններ էր մատուցում կախվածություն ունեցող անձանց: Մուտքն ու ելքը ազատ էր, անձը կարող էր գալ կենտրոն, ստանար սնունդ, հագուստ, աշխատանք մասնագետների հետ և դուրս գար: Կախվածությունից ձերբազատվելու պահանջ չէր դրվում, բայց շահառուների հետ տարվող աշխատանքն ուղղված էր դրանից ազատվելու մոտիվացիային:

Մյուս կենտրոնը, որը նույնպես համայնքային ենթակայության էր, աշխատում էր սկզբունքորեն այլ մոդելով: Շահառուի հետ աշխատանքն ուներ 3 մակարդակ՝ 1-ին մակարդակում մարդը կարող էր գալ կենտրոն անկախ նրանից, ուներ կախվածություն, թե ոչ: Եթե նա տարվող աշխատանքի արդյունքում ձերբազատվում էր կախվածությունից, ապա ստանում էր մյուս մակարդակի ծառայությունը՝ ապրելու վայր (կենտրոնը ուներ սենյակներ), սնունդ, հագուստ և այլն; Պայման էր սահմանվում չօգտագործել ակոհոլ կամ թմրանյութ: Եթե խախտում էր այդ պայմանը, ապա տեղափոխվում էր 3-րդ մակարդակ՝ բժշկական ծառայություններ ստանալու:

Բազմամասնագիտական թիմը համապատասխան գործիքակազմով գնահատում է շահառուի կարիքները, կազմում անհատական պլան, որը վերանայվում է պարբերաբար: Շահառուների մուտքն ու ելքը ազատ էր:

Հանդիպումների ընթացքում հնչեցվել են հարցեր, ներկայացվել է ՀՀ-ում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց համար նախատեսված ծառայությունների գործունեության սկզբունքները և օրենսդրական կարգավորումները:

Ուսումնական այցը հնարավորություն տվեց ծանոթանալու Շվեդիայում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց համար նախատեսված ծառայությունների գործունեությանը և կարգավորումներին, ձևավորելու համագործակցություն ոլորտային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ հայկական կողմին տրամադրվեն բոլոր իրավական փաստաթղթերը, որոնց հիման վրա գործում կամ ստեղծվել են ծառայությունները, դրանց ներկայացվող պահանջները:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

1) Շվեդիայում ձեռք բերված փորձը շատ ուսանելի է, այն մեծ հիմք կարող է հանդիսանալ ապահիստիտուցիոնալացման ռազմավարությունը մշակելու և իրականացնելու համար:

2) Շատ կարևոր է ուժեղացնել տարածքային ինքնակառավարման մարմիններին՝ հաշմանդամություն ունեցող անձանց ծառայություններ մատուցելու տեսանկյունից, համայնքային պատասխանատվության տակ վերցնելու այդ ծառայությունները,

3) Անձին հայտնաբերելը, կարիքի գնահատելը, ուղղորդելը պետք է գործի սահուն՝ հստակ մշակված և ներդրված միջոլորտային մեխանիզմներով:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

29. 09. 2020.
Թեաթաթ